445-449

[illegible]
15, 16, 17, 18, 19

891.99-192
Պ-52
Ա 304
բ. 67

# ՆՈՐ ԵՐԳԵՐ

## ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Խօսք
Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

Եղանակ
Ա. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ

1884

3551

15-2014

2304
39

# ՆՈՐ ԵՐԳԵՐ

## ԳԷՐԳԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՐԳ ԴՊՐՈՑԻ

1881

Ո՜վ յարկ վսեմ, տուն սրբանուէր,
Ընկա՛լ սրտից մեր օրհներգներ։

Անո՛յշ որորան մատաղ մեր տիոց,
Ուր զուարթ սահի այդ կենաց ոսկեղծ,
Ուր մեզ որորէն հողմունք երկնաշունչ
Եւ հրեշտակք ի մեզ ցանեն վարդից փունջ,

Ուր փրկարար ջամբէ մեզ կաթ
Իմաստութիւն մայր խանդակաթ։

Պարտէզ բանաւոր զոր խնկեն ի բոյր
Բարւոյն, Ճշմարտին ծաղկունք գեղաբոյր,
Որոց զհիւթ ծըծեն հոգիք մեր անյագ
Կազմել իմաստից մեղր անապակ ։

—

Ո՜վ յարկ վըսեմ, տուն որբանուէր
Ընկա՛լ սրտից մեր օրհներգներ ։

Աշխարհն է մի ծով ուր դառայ մրրիկ,
Դպրոցն անխըռով ծոց մ'է հանդարտիկ,
Ուր չիշխեն փըչել մահահոտ քամիք
Եւ պարզի վերեւն անամպ մի երկինք ·

Խաղաղութեան քաղցր օթեվան,
Անմեղ տարփից՝ երանութեան ։

Բայց շուտ կը հանին օրեր փոթորկի,
Կեանքն է պատերազմ, զինուոր եմք պարտքի ·
Դպրոց մեզ կուտայ դրօշակ սիրոյ,
Գիտութեան զէնքեր, տապար հաւատոյ ։

—



Տաճար հրաշագործ, վըսեմ ձուլարան,
Ուր կապարն յոսկի, նիւթն 'հոգի դառնան,
Եւ դու կերտես,
Դո՛ւ, զապագայն ·

Մանկանց սիրելի,
Ազգաց պաշտելի,
Քեզ փա՜ռք, ո՜վ դպրոց,
Լուսո՜յ վառարան ։

# ԵՐԳ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

—

## 1883

—

ՊԱՐՆ

Աշխատութիւն, մեր զօրութիւն,
Քեւ կը լինիմք մեք աննկուն.
Պատիւ քեզի, քեզ օրհնութի՛ւն,
Ո՛վ ստեղծիչ Աշխատութիւն:

ՈՄՆ

Երկիր խոպան էր անմշակ,
Փուշ ու տատասկ ծածկէր համակ.
Զայն վաստակ
Ի շէն ի դրախտ փոխեց արագ:

ԱՅԼՔ

Մեր միտքն անհերկ դաշտ մ'է նոյնպէս,
Մացառամոլ. ժիր թէ վարես,
Լուսագէս
Հունձք գիտութեան կանգնին դէզ դէզ:



ՊԱՐՆ

Աշխատութիւն, մեր զօրութիւն, եւն:

ՈՄՆ

Անզէն էր մարդ եւ կը դողար
Դէմ գազանաց՝ տարերց տկար.
Բայց զաշխարհ
Նուաճեց իւրեն ճիգն անդադար:

ԱՅԼՔ

Տկար եմք մեք եւ մեր ոտներ
Կը դողդոջեն ի զառիվեր.
Անվեհեր
Թէ քայլեմք միշտ՝ պսակն է մե՛ր:

ՊԱՐՆ

Աշխատութիւն, մեր զօրութիւն, եւն:

ՈՄՆ

Երկինք՝ կայծակ,
Երկիր՝ խարակ,
Ծովը կոհակ
Ունէր, սակայն

Սէգ ամենայն
Փշրեց վտանգ։

ԱՅԼՔ

Ի՞նչ փոյթ՝ դժուար
Է թէ ճամբար.
Կամ դաս՝ երկար,
Ամէն կնճիռ
Կը լուծուի՝ ժիր
Թէ գործենք յար։

ԳԱՐՆ

Աշխատութիւն, մեր զօրութիւն, են։

ՈՄՆ

Աշխատողին
Քաղցր է բաժին.
Խինդ ու տաղին,
Անդորր՝ հանգիստ,
Օրեր անվիշտ
Քրտանցն են գին։

ԱՅԼՔ

Դիմենք արագ
Ի նըպատակ,



Ուղղոյն ի ծագ
Յաղթականին
Մընայ դափնին
Ու մըցանակ։

ԳԱՐՆ

Աշխատութիւն, մեր զօրութիւն,
Քեւ կը լինիմք մեք աննըկուն,
Պատի՛ւ քեզի, քեզ օրհնութի՛ւն,
Ո՛վ ստեղծիչ Աշխատութիւն։

# ԵՐԳ

## ՄԻՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ

---

**1884**

---

ՊԱՐՆ

Ողջո՛յն, ո՛վ օր
Հանդիսաւոր,
Դու որ ըղձեր
Լընուս իղձեր
Արեւուդ լոյս
Քանի՛ անոյշ
Է մեր հոգւոյն,
Քեզ շա՛տ ողջոյն։

ՈՍՆ

Ձի՛ մեծաշուք այս տեսարան,
Է մեր փառաց հանդիսարան.



Մեր հայրն ու մայրը ահարաղմեր,
Յաղթանակաց մեր վըկայներ.
Հայ Ազգութեան աւագանի
Պատրաստ ի ձօն ունի դափնի.
Ո՜հ, զի՛ քաղցր է յայս վեհ կաճառ
Պըսակ ի գլուխ առնուլ պայծառ։

ՊԱՐՆ

Այո՛, այո՛,
Ձի՛ փառաւոր
Արժանաւոր
Գոլ պըսակի
Մրցանակի
Յայս վեհախումբ
Ի պերճ ակումբ,
Այո՛, այո՛։

ՈՍԱՆՔ

Աշխատասէր ուսանողին սիրտն այդ բերկրի,
Ծուլին ճակատ ամօթահար կը կարմրի։

ՈՍՆ

Վաստակն էր դժուար,
Մեր ճակտէն ի վար

Քիրտն հոսէր շիթ շիթ.
Բայց ո՞վ չըմոռնար
Ճըգունքն անդադար
Յայս օր բերկրաւիթ:

ՊԱՐՆ

Ո՜հ, երանի՜ քաջ գինուորին
Լուսոյ մարտին.
Կռուեցաւ անսասան.
Արդ պանծայ յաղթական:

ՈՄՆ

Զի՞արդ ցնծան սիրտք մեր ծնողաց,
Ժպտի Ազգին դէմք տրտմաղդեաց,
Իւրեանց ճակատ
Ալ չէ՛ վըհատ:

ՈՄԱՆՔ

Յուսոյ նըշոյլք խառնուին
Ուրախութեան արցունքին:

ՈՄՆ

Ի հորիզոն ապագային
Զուարթ հային:



ՊԱՐՆ

Մեր պըսակներ
Պիտ' տամք նըւէր
Իւրեանց գլխուն,
Զերդ ճաճանչնե
Փայլող ի ձիւն
Լերանց ճակատուն:

ՈՄՆ

Մրցանակաց այս պերճ հանդէս
Թո՛ղ նոր խրախոյս վառէ ի մեզ.
Անվըհատ
Ելնե՛մք ըղձոյն ի գագաթ:

ՈՄԱՆՔ

Անդ ի սար
Վառ ի վառ
Դրօշ ծիրանեփայլ
Ծածանի ծալ ծալ.
Ոսկետառ
Անուն կայ վըրան
ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ:

## ՊԱՐՆ

Խըլէ՛մք զայդ դրօշակ,
Փառա՛ց հրաւիրակ,
Մըխիլ ի ծոց
Ապագայի
Ուր դեռ հոծ
Մեզ պահի
Պսակաց
Ա՛ անց
Գանձ։

445
<< Ազգային գրադարան >>
NL0014843

446
<< Ազգային գրադարան >>
NL0014842

447
<< Ազգային գրադարան >>
NL0014841

448
<< Ազգային գրադարան >>
NL0014840

449
<< Ազգային գրադարան >>
NL0014839

0014839 0014840 0014841 0014842 0014843